Լրամշակված նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-385[2]-04.10.2022,11.11.2022-ՏՏԳԾ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԲՈՒՅՍԵՐԻ ՍՈՐՏԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բույսերի սորտերի պահպանության մասին» 2017 թվականի դեկտեմբերի 8-ի ՀՕ-231-Ն օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասում «կամ գենային ինժեներիայի» բառերից հետո լրացնել «միջոցով, բացառությամբ գենային ինժեներիայի վերափոխման միջոցով ստացված գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների» բառակապակցությամբ:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից 6 ամիս հետո:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԲՈՒՅՍԵՐԻ ՍՈՐՏԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բույսերի սորտերի պահպանության մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ 2017 թվականի դեկտեմբերի 8-ի ՀՕ-231-Ն օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասում «կամ գենային ինժեներիայի» բառերից հետո լրացնել «միջոցով, բացառությամբ գենային ինժեներիայի վերափոխման միջոցով ստացված գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների» բառակապակցությամբ:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից 6 ամիս հետո:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ Ազգային Ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություն կատարելու մասին», «Բույսերի սորտերի պահպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Սերմերի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին, «Օրգանական գյուղատնտեսության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Լիցենզավորման մասին» օրենքում լրացում կատարելու մասին», «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» եւ «Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին»

(Կ-385-04.10.2022-ՏՏԳԾ-011/1) օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ ներկայացված առաջարկների

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«ԳԵՆԵՏԻԿՈՐԵՆ ՁԵՎԱՓՈԽՎԱԾ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔ					
1	**Կառավարություն**	**2-րդ հոդված 1-ին մաս 1-ին կետ**	«անբջիջ» բառը փոխարինել «ոչ բջջային բառով»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2	**Կառավարություն**	**2-րդ հոդված 1-ին մաս 3-րդ կետ**	«մարդու» բառից հետո հանել «կյանքի ու» բառերը	Ընդունվել է:	Ընդունվել է:
3	**Կառավարություն**	**4-րդ հոդվածի վերնագիր**	«խնդիրները» բառը փոխարինվել է «խնդիրը» բառով՝ նկատի ունենալով, որ նշված հոդվածի 2-րդ մասով նախատեսվել է մեկ խնդիր:	Ընդունվել է:	Ընդունվել է:
4	**Կառավարություն**	**6-րդ հոդվածի վերնագիր**	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը, համաձայն որի նորմատիվ իրավական ակտում	Ընդունվել է:	Ընդունվել է:

			միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ՝ 6-րդ հոդվածի վերնագրից հանել «(մոնիթորինգին)» բառը, քանի որ այն վերաբերում է մշտադիտարկմանը և Նախագծի մի շարք հոդվածներում գործածված է հենց «մշտադիտարկում» բառը:		
5	**Կառավարություն**	**7-րդ հոդվածի 1-ին մաս, 8-րդ հոդված 1-ին մաս**	7-րդ հոդվածի 1-ին մասի և 8-րդ հոդվածի 1-ին մասի «լիազորությունն» բառը փոխարինվել է «լիազորություններն» բառով՝ նկատի ունենալով, որ նշված մասով նախատեսված են մի քանի լիազորություններ: Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասում ավելացնել նոր 5-րդ, իսկ 8-րդ հոդվածի 1-ին մասում ավելացվել նոր 6-րդ կետ հետևյալ բովանդակությամբ՝ **«Սույն օրենքով նախատեսված այլ լիազորություններ»,** քանի որ ՀՀ կառավարությունը և Լիազոր մարմինն իրականացնում են նաև Նախագծով սահմանված այլ լիազորություններ:	Ընդունվել է:	Ընդունվել է:
6	**Կառավարություն**	**9-րդ հոդվածի վերնագիր**	2-րդ գլխի վերնագրին համապատասխանեցնելու նպատակով՝ 9-րդ հոդվածի վերնագիրը շարադրվել է հետևյալ կերպ՝	Ընդունվել է:	Ընդունվել է:

			«ԳՁՕ-ների գործածության վերաբերյալ տեղեկատվության տրամադրումն ու հասարակության իրազեկումը»:		
7	**Կառավարություն**	**11-րդ հոդված**	11-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը շարադրվել են հետևյալ կերպ՝ **«Հոդված 11. Անցումային դրույթներ** Սույն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով սահմանված՝ գիտահետազոտական կազմակերպությունների կողմից գիտահետազոտական, փորձացուցադրական նպատակներով մեկուսացված համակարգերում ԳՁՕ-ի գործածման պահանջների մասին, լաբորատոր փորձաքննության ենթակա բույսերի տեսակների ցանկը, գիտահետազոտական, փորձացուցադրական նպատակներով գործածվող ԳՁՕ-ների փորձանմուշների և ստացվող նմուշների գիտահետազոտական, փորձացուցադրական աշխատանքների ավարտից հետո ոչնչացման մասին, 7-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ԳՁՕ-ների գործածության հետևանքով շրջակա միջավայրին, մարդու առողջությանը, գյուղատնտեսական նշանակության հողերին սպառնացող վտանգների		

			կանխման և հասցված վնասների վերացմանն ուղղված միջոցառումների պետական ծրագրի ընդունումը, մեկուսացված համակարգին ներկայացվող տեխնիկական և մեթոդական պահանջների սահմանումը, բացառապես գիտահետազոտական, փորձացուցադրական աշխատանքների համար ԳՁՕ-ների ներմուծման, արտահանման և ոչնչացման կարգի սահմանումը, մեկուսացված համակարգերում ԳՁՕ-ների գործածության և կենսաանվտանգության ապահովման կարգը սահմանելու մասին Կառավարության որոշումները ընդունվում է օրենքի պաշտոնական հրապարակումից հետո՝ վեց ամսվա ընթացքում: 2. Սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերով սահմանված՝ մեկուսացված համակարգում ԳՁՕ-ների գործածման յուրաքանչյուր գործընթացի մշտադիտարկման չափանիշներն ու կարգը, մշտադիտարկման մեթոդներն ու ուղեցույցները, մշտադիտարկման իրականացման նպատակով հաստատվող ԳՁՕ-ների հարցերով փորձագիտական խմբի հաստատումը, փորձագիտական խմբի ձևավորման կարգը, իրավասությունները,		

			պարտականությունները սահմանող իրավական ակտն ընդունվում է լիազոր մարմնի կողմից՝ օրենքի պաշտոնական հրապարակումից հետո՝ վեց ամսվա ընթացքում:»		
«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություն կատարելու մասին»					
1	**Կառավարություն**	**2-րդ հոդված**	2-րդ հոդվածում «հոլովածներով» բառից հետո լրացնել՝ ««քննում են» բառերը փոխարինել «քննում է» բառերով,»» բառերը	Ընդունվել է:	Ընդունվել է:
«Բույսերի սորտերի պահպանության մասին» օրենքում լրացում կատարելու մասին»					
1	**Կառավարություն**	**1-ին հոդված**	«Հայաստանի Հանրապետության» բառերը հանել	Ընդունվել է:	Ընդունվել է:
«Սերմերի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին					
	Կառավարություն	**1-ին հոդված**	1-ին հոդվածից հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը		
	Կառավարություն	**1-ին հոդված**	1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 3-րդ մասում «պահպանման» բառից հետո լրացնել «տնօրինման» բառը՝ նկատի ունենալով, որ Նախագծի 1-ին հոդվածում այն ևս առկա է:		
«Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին»					
1	**Կառավարություն**	**1-ին հոդված**	Հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը, իսկ «խմբագրել հետևյալ կերպ» բառերի	Ընդունվել է:	Ընդունվել է:

			փոխարեն լարցնել «շարադրել հետևյալ խմբագրությամբ» բառերը		
«Օրգանական գյուղատնտեսության մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին»					
	Կառավարություն	**1-ին հոդված**	Հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը		
«Լիցենզավորման մասին» օրենքում լրացում կատարելու մասին»					
1	**Կառավարություն**	**1-ին հոդված**	Հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը	Ընդունվել է:	Ընդունվել է:
«Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքում լրացում կատարելու մասին»					
1.	**Կառավարություն**	**1-ին հոդված**	Հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը	Ընդունվել է:	Ընդունվել է: